



International Parkinson and
Movement Disorder Society

Վիլսոնի հիվանդություն: Էական փաստեր հիվանդների համար:

Ինչ է Վիլսոնի հիվանդությունը?

Վիլսոնի հիվանդությունը ժառանգական հիվանդություն է, որի պատճառը արատավոր գենն է: Այն առաջացնում է պղնձի ավելորդ քանակների կուտակում ուղեղում, յարդում և այլ օրգաններում:

Ինչպես է Վիլսոնի հիվանդությունը առաջին անգամ հայտնվում եվ որոնք են հաճախակի ախտանիշները?

Վիլսոնի հիվանդության որոշ ախտանիշներ կարող են սկսվել մանկական հասակում կամ վաղ հասունության շրջանում: Այդ նյարդաբանական ախտանիշները հաճախ ներառում են՝

- Ակամա շարժումներ, որոնք ընդգրկում են աննորմալ կեցվածքը (դիստոնիայի նման) կամ դողը
- Հավասարակշռության կամ ձեռքերի կոորդինացիայի դժվարություն
- Խոսքի կամ կուլ տալու դժվարություն
- Ճանաչողական և վարքային փոփոխություններ

Վիլսոնի հիվանդության ժամանակ յարդի խնդիրները նույնպես հաճախակի են, ինչպես նաև անեմիան, երիկամների կամ սրտի հետ կապված պրոբլեմները:

Որն է Վիլսոնի հիվանդության պատճառը?

Վիլսոնի հիվանդությունը ժառանգական է: Այն առաջանում է հատուկ գենի մուտացիայի պատճառով, որը սինթեզում է սպիտակուց, որն անհրաժեշտ է ավելցուկային պղնձը մարմնից հեռացնելու համար: Դա առաջացնում է մարմնում պղնձի կուտակում, հատկապես ուղեղում, յարդում և աչքերում: Ավելցուկային պղնձի պատճառով վնասը առաջացնում է Վիլսոնի հիվանդության ախտանիշները:

Ինչպես կարելի է ախտորոշել Վիլսոնի հիվանդությունը?

Բժիշկների համար կարևոր է ուշադիր հետևել Վիլսոնի հիվանդության ախտանիշներին, քանի որ այն կարելի է հեշտությամբ բաց թողնել: Այն հիմնականում ախտորոշվում է արյան և մեզի քննությամբ:

Ցերուկալազմինը յարդում սինթեզվող սպիտակուց է, որը պահեստավորում և տեղափոխում է պղնձը ձեր մարմնում: Արյան թեստը, որը չափում է այդ սպիտակուցը կարող է կիրառվել Վիլսոնի հիվանդության ախտորոշման համար: Բայց, քանի որ այդ թեստը կարող է երբեմն բաց թողնել Վիլսոնի հիվանդությունը, խորհուրդ է տրվում մեզի թեստը, որը չափում է պղնձի մակարդակը: Այս թեստը ներառում է մեզի հավաքումը ամբողջ 24 ժամվա ընթացքում: Մեզի այս թեստը պատշաճ կատարելը շատ կարևոր է Վիլսոնի հիվանդության ախտորոշման համար:

Կան Վիլսոնի հիվանդության ախտորոշման հետ կապված այլ թեստեր, որոնք ներառում են՝

- Աչքի քննություններ՝ եղջերաթաղանթում աննորմալ պղնձի հայտնաբերման համար
- Լյարդի բիոպսիա՝ ախտորոշումը հաստատելու համար
- Գլխուղեղի ՄՌՏ սկանավորում, Վիլսոնի հիվանդության հետ կապված փոփոխությունները հայտնաբերելու համար
- Գենետիկ թեստավորում վերջնական ախտորոշում կատարելու համար

Արդյոք Վիլսոնի հիվանդությունը բուժելի է?

Այո: Վիլսոնի հիվանդությունը շատ բուժելի է: Վաղ ախտորոշումը և բուժումը կարևոր են ուղեղի և մարմնի անդառնալի վնասը կանխելու համար:

Արդյոք պետք է փոխեն սննդակարգս?

Շատ սովորական մթերքներ պարունակում են պղնձ և շատ մարդիկ ստանում են ավելին, քան նրանց անհրաժեշտ է: Եթե դուք ունեք Վիլսոնի հիվանդություն, ավելի լավ է խուսափեք կամ ուտեք ավելի քիչ պղնձով հարուստ սնունդ, այդ թվում՝

- Շոկոլադ
- Ընկույզ
- Խեցեմորք
- Լյարդ



Վիլսոնի հիվանդություն: Էական փաստեր հիվանդների համար:

Ինչպիսի բուժումներ կան?

Վիլսոնի հիվանդության համար առկա են բուժման մի քանի տեսակներ: Դրանք ներառում են՝

- Դեղամիջոցներ, որոնք նվազեցնում են աղիներից պղնձի կլանումը: Դրանք ներառում են ցինկի պատրաստուկները: Նման դեղամիջոցները որոշ ժամանակ են պահանջում աշխատելու համար:
- Դեղամիջոցներ, որոնք կապվում են մարմնի պղնձի հետ: Դրանք ներառում են Դ-Պենիցիլամին, Տրիենտին և Ամոնիում տետրաթիո-մոլիբդատ: Այս դեղամիջոցները կարող են լուրջ կողմնակի բարդություններ ունենալ և հասանելի չեն ամեն երկրում:
- Լյարդի փոխպատվաստումը կարող է օգտագործվել ծանր դեպքերում՝ պղնձի նյութափոխանակությունը նորմալացնելու համար:

Դեղամիջոցները կարող են օգտագործվել նաև Վիլսոնի հիվանդության ախտանիշները բարելավվելու համար, ներառյալ աննորմալ շարժումները: Խոսք է թշկի հետ այն մասին, թե որ բուժումը կամ բուժումները կարող են հարմար լինել ձեզ համար:

Արդյոք ընտանիքի մյուս անդամները պետք է թեստավորվեն?

Քանի որ Վիլսոնի հիվանդությունը գենետիկ խանգարում է, ընտանիքի անդամները կարող են ենթարկվել ռիսկի: Վիլսոնի հիվանդությունը առատոստ ռեցեսիվ հիվանդություն է: Սա նշանակում է, որ աննորմալ գենի երկու օրինակ է անհրաժեշտ: մեկը՝ մորից, մեկը՝ հորից: Մայրը և հայրը պետք է լավ լինեն, քանի որ նրանք ունեն մեկ նորմալ գենի օրինակ: Այնուամենայնիվ, եղբայրներն ու քույրերը կարող են ենթարկվել ռիսկի: Եթե ձեզ մոտ ախտորոշվել է Վիլսոնի հիվանդություն և ունեք եղբայրներ և քույրեր, նրանք պետք է հետազոտվեն հիվանդության համար: Հազվադեպ դեպքերում հնարավոր է նաև, որ ընտանիքի մյուս անդամները հետազոտվեն: Անպայման հարցրեք ձեր բժշկին կամ գենետիկ խորհրդատուին, արդյոք ձեր ընտանիքի անդամները պետք է հետազոտվեն: